

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2018թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. Կարևորագույն արդյունքները

«Ստվերային շրջանառությունների բացահայտման և հարկերը թաքցնելու հնարավորությունների սահմանափակման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆ. Վ.Լ.Հարությունյան) կատարված հետազոտության արդյունքում ցույց է տրվել, որ վերջին երկու տասնամյակներում աշխարհի տարբեր երկրների տնտեսագետների ուշադրությունը սևեռվել է «ստվերային տնտեսություն» կոչվող երևույթի վրա, քանի որ չկա մի երկիր, որի տնտեսական զարգացման ռազմավարության առաջնահերթությունների շարքում չլինի ստվերային տնտեսության բացահայտման և կրճատման հիմնախնդիրը: Թեմայի շրջանակներում հանգամանալից ներկայացվել է հարկային վարչարարության նոր մեխանիզմների և նոր կիրարկվող հարկային օրենսդրության ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների հավաքագրման, ստվերի, կոռուպցիոն ռիսկերի կրճատման վրա՝ շեշտադրում կատարելով հավասար մրցակցային պայմանների ապահովմանը, ինչպես նաև կատարվել են գործնական նշանակության հարցադրումներ, առաջադրվել են դրանց հնարավոր լուծումները: Ուսումնասիրությունները իրականացվել են ստվերային տնտեսության առաջացման և ընդլայնման պատճառների, տնտեսական և քաղաքական գործոնների բացահայտման, ստվերային տնտեսության ծավալների գնահատման և դրանց կրճատման ուղղությամբ համապատասխան միջոցառումների մշակման համատեքստում:

«Միջուկային էներգետիկայի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Հ.Ա.Մարկոսյան) միջուկային էներգետիկայի ոլորտի զարգացման միջազգային միտումների համակարգման արդյունքում ցույց է տրվել, որ ոլորտի զարգացման հեռանկարներն առկա տեխնոլոգիական զարգացումների պայմաններում խիստ կասկածելի են՝ պայմանավորված միջուկային վառելիքի առաջարկի կրճատման, օգտագործված միջուկային վառելիքի և միջուկային թափոնների վերամշակման տեխնոլոգիաների անկատարության և բացակայության, միջուկային թափոնների մշտական պահպանման պաշտոնապես գործող պահեստային տարածքների բացակայության, շահագործման հանձնվող նոր ռեակտորների թվի և վերականգնվող էներգիայի շահագործման ինքնարժեքի շարունակական անկման, ինչպես նաև մրցունակության բարձրացման և այլ գործոններով:

«Արտահանման խթանման և ներմուծման փոխարինման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Լ.Ն.Մարգարյան) հիմնավորվել է, որ ՀՀ-ում արտահանումը 2000-2016թթ. ունեցել է բավականին բարձր կենտրոնացվածություն. 4 ապրանքախմբերի (թանկարժեք քարեր և մետաղներ, ոչ թանկարժեք մետաղներ, պատրաստի սնունդ, հանքահումքային ապրանքներ) միջինում բաժին էր ընկնում արտահանման 82.9%-ը: Հարկ է նշել, որ արտահանման մեջ գերակշռում է միջանկյալ հումքը, որի արտադրությունում ստեղծվող ավելացված արժեքի կշիռը խիստ սահմանափակ է և ենթակա է միջազգային գների նշանակալի տատանումներին, ինչն էլ ավելի է մեծացնում արտահանման խոցելիությունը: Առևտրային հաշվեկշռի պակասորդը

2016թ. ՀՀ-ում կազմել է ՀՆԱ-ի ավելի քան 16%-ը, ինչը ցույց է տալիս արտաքին առևտրի զգալի անկատարությունը:

2. Բազային ֆինանսավորմամբ ստացված արդյունքները

«Ստվերային շրջանառությունների բացահայտման և հարկերը թաքցնելու հնարավորությունների սահմանափակման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆ. Վ.Լ.Հարությունյան) ցույց է տրվել, որ Հայաստանում որևէ պետական կառույցի կողմից ստվերային տնտեսության չափերի հանգամանակից գնահատում և խորը վերլուծություն դեռևս չի իրականացվել: Այսպես, գնահատման ուղղակի մեթոդների կիրառմամբ և առկա ռիսկերի բացահայտման միջոցով ստվերային գործունեության չափերը ըստ Պետական եկամուտների կոմիտեի գնահատականների 2016թ. դեկտեմբերի վերջին խոշոր հարկ վճարողների մոտ կազմել է 48,8 տոկոս, իսկ ըստ տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից կատարված գնահատումների՝ 35-40 տոկոս, որոնց գնահատումները հիմնականում կատարվում են անուղղակի մեթոդների կիրառմամբ: Սակայն որքան էլ բարդ է ստվերային տնտեսության չափերի գնահատումը, այն չափազանց կարևոր է ինչպես տնտեսական աճի վերլուծության, այնպես էլ տնտեսական քաղաքականության ուղղությունների սահմանման տեսանկյունից: Ստվերային տնտեսության իրական պատկերը հնարավորինս համակողմանիորեն ներկայացնելու, իրական գնահատականների, տնտեսության առանձնահատկությունների, ստվերի առաջացման նախապայմանների, գերակշռող տեսակի բացահայտման համար նպատակահարմար է չսահմանափակվել մեկ կամ երկու մեթոդների կիրառմամբ, այլ կիրառել կոմպլեքս մեթոդներ:

«Միջուկային էներգետիկայի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Հ.Ա.Մարկոսյան) բացահայտվել են Հայաստանում միջուկային էներգետիկայի զարգացման փաստարկները, որոնց շարքում կարևոր նշանակություն ունեն տնտեսական տեսանկյունից միջուկային վառելիքի տեղափոխման մատչելիությունը, միջուկային էներգիայի համեմատաբար էժանությունը, երաշխավորված հզորությունը, էկոլոգիապես մաքրությունը, ինչպես նաև ոլորտի զարգացման խոչընդոտները, որոնց շարքում են վառելիքի ներկրվող բնույթը, միջուկային վթարների բացառման անհնարինության վիճակագրական հիմնավորումները, Հայկական ԱԷԿ-ի տեղադիրքը ահաբեկչության հետ կապված ռիսկերը, ԱԷԿ-ի բարոյական մաշվածությունն ու նոր էներգաբլոկի շինարարության ֆինանսատնտեսական չլուծված խնդիրները, և այլն: Հայաստանի համար ԱԷԿ ունենալու և չունենալու հարցը չի կարող սահմանափակվել միայն տնտեսական հիմնավորումներով: ԱԷԿ-ի գոյությունը վկայում է Հայաստանի միջուկային պետության կարգավիճակը, որը մուտք ունի դեպի միջուկային պետությունների ակումբ: Միջուկային ոլորտում ՀՀ քաղաքականությունը պետք է ուղղված լինի գործող էներգաբլոկների հուսալիության բարձրացմանն ու շահագործման ժամկետի երկարացմանը:

«Արտահանման խթանման և ներմուծման փոխարինման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Լ.Ն.Սարգսյան) ՀՀ ՀՆԱ-ի, արտահանման և ներմուծման միջև կապի բացահայտման ռեգրեսիոն մոդելի վերլուծությունը թույլ է տվել եզրակացնել, որ արտահանման 1 ԱՄՆ դոլարով աճը հանգեցնում է ՀՆԱ 0.003 ԱՄՆ դոլարով աճի, իսկ ներմուծման 1 ԱՄՆ դոլարով աճը՝ ՀՆԱ 0.0015 ԱՄՆ դոլարով աճի: Արտահանման խթանման և ներմուծման փոխարինման համար հաշվարկվել են մի շարք համեմատական առավելությունների ցուցանիշներ, ինչի արդյունքում բացահայտվել է, որ «Չուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք»,

«Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Օխսխոտ և ծխսխոտի արդյունաբերական փոխարինողներ», «Հանքաքար, խարամ և մոխիր», «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ», «Սև մետաղներ», «Պղինձ և իրեր դրանից», «Ալյումին և իրեր դրանից», «Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից», «Ժամացույցներ և դրանց մասեր» ապրանքախմբերն ունեն բացահայտված համեմատական առավելություն, կարևոր նշանակություն ունեն արտահանման տեսանկյունից և նպաստում են ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը:

«Գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Գ.Մանուչարյան) կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրների լուծումը ագրարային ոլորտի կայուն ու համաչափ զարգացման հիմնական նախապայմաններից է: Գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսության ապահովագրության նկատմամբ պահանջարկը դեռևս մեծ չէ, ինչը բացատրվում է մի շարք հանգամանքներով, որոնցից կարելի է առանձնացնել գյուղմթերք արտադրողների վճարունակության ցածր մակարդակը: ՀՀ ագրարային հատվածում ապահովագրության համակարգի ներդրման գործընթացի դիտարկումների արդյունքում հիմնավորվել է, որ պետության աջակցությունը նշված համակարգի արդյունավետության հիմնական նախապայմաններից է: Այդ մտտեցումը պահանջում է օրենսդրորեն ամրագրել գյուղատնտեսության ապահովագրության 3 գլխավոր կողմերի՝ գյուղատնտեսական մթերք արտադրողների (վերամշակողների), ապահովագրող ընկերությունների և պետության փոխհամագործակցության ձևերը, աջակցության ուղղությունները, չափերը և այլն:

«Փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման համալիր միջոցառումները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Ս.Ա.Դալլաքյան) ցույց է տրվել, որ ՓՄՁ ոլորտում ֆինանսական խնդիրները լուծելու և արտահանման գործառնություններում փոքր և միջին բիզնեսն ակտիվացնելու, ինչպես նաև միջազգային շուկայում արտադրանքի մրցունակությունը մեծացնելու համար անհրաժեշտ է մշակել բանկերի և վարկային կազմակերպությունների՝ ՓՄՁ-ներին վարկեր տրամադրելու մեխանիզմներ՝ ընձեռելով արտոնյալ տոկոսադրույքներ՝ մասնակի կամ լրիվ մարման սկզբունքով, ինչպես նաև մշակել հումքին և նյութերին վերաբերող մաքսատուրքերը արտոնյալ գանձելու ծրագիր, որ ներմուծվում են՝ արտահանման նկատառումով ապրանքների արտադրության համար: Կարևորվել է ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության դյուրացումը, մասնավորապես, նորաստեղծ ձեռնարկությունների ու գյուղմթերք արտադրողների համար՝ լիզինգային ֆինանսավորման հասանելիությունը, որը կարող է լինել բանկային ֆինանսավորման այլընտրանք:

«Տրանսֆերային գնագոյացման առանձին գործընթացների առավել արդյունավետ համագործակցության հարթակի ձևավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Բ.Յու.Բաղդասարյան) կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ տրանսֆերային գնագոյացման առումով ԵՏՄ երկրներում վերահսկվող գործարքների սահմանումները գրեթե նույնական են, սակայն այդ երկրներում տարբեր կերպ են սահմանազատում չվերահսկվող և վերահսկվող գործարքները, հետևաբար՝ նաև տրանսֆերային գնագոյացման կանոնները: Տրանսֆերային գնագոյացման մասին օրենքը ՀՀ հարկատուների համար կարող է առաջացնել լրացուցիչ պարտավորություններ, սակայն նման կանոնների ներդրումն օտարերկրյա ներդրողների կողմից դրականորեն է ընկալվում: Արտասահմանցի գործարարները ցանկանում են վստահ լինել, որ գործարքի երկու կողմերում էլ հարկային

մարմինների կողմից գործում են միատեսակ մոտեցումներ, իսկ գործարքում կիրառվող գները շուկայական են և արդարացի:

«ՀՀ ռազմարդյունաբերության նորարարական զարգացման կլաստերային մեխանիզմները» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Գ.Է.Հարությունյան) օրենսդրաիրավական դաշտի անկատարությունը ներկայացվել է որպես Հայաստանում ռազմարդյունաբերության ոլորտում կլաստերացման գործընթացին խոչընդոտող հիմնական գործոններից մեկը, որի առնչությամբ առաջարկվել է «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքում վերաշարադրել «Ռազմատեխնիկական քաղաքականություն», «Ռազմարդյունաբերական գործունեություն» և «Ռազմարդյունաբերական կլաստեր» հասկացությունների բնորոշումները: Ռազմարդյունաբերության ոլորտում կլաստերացման գործընթացների հիմնական խոչընդոտ դիտելով տեղեկատվական ասիմետրիան, տնտեսության տարբեր հատվածների միջև արդյունավետ կապերի բացակայությունը և արտադրական տարբեր ոլորտների միջև թույլ փոխկապվածությունը՝ առաջարկվել է մասնակիորեն ազատականացնել ռազմարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:

3. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները

«Ռազմարդյունաբերության նորարարական զարգացման հնարավորությունները Հայաստանում» պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Գ.Է.Հարությունյան) GMM (Generalized method of moments) մոմենտների ընդհանրացված մեթոդով հետազոտվել է ռազմական ծախսերի և տնտեսական աճի միջև փոխկապվածությունը երկու խումբ՝ Արևելյան Եվրոպայի հետխորհրդային (Հայաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա, Ադրբեջան, Վրաստան) և փոքր բաց տնտեսություն ունեցող երկրների (Հայաստան, Իսրայել, Հարավային Կորեա, Սինգապուր, Թայվան, Շվեյցարիա, Ֆինլանդիա) համար: «Force Field» վերլուծության և «Stakeholder» վերլուծության «Power/Interest» մատրիցի միջոցով, ինչպես նաև՝ մոդիֆիկացված SWOT-վերլուծության եղանակով գնահատվել է Հայաստանում ռազմարդյունաբերության զարգացման ներուժը:

4. Կիրառական աշխատանքների արդյունքները

«Ստվերային շրջանառությունների բացահայտման և հարկերը թաքցնելու հնարավորությունների սահմանափակման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆ. Վ.Լ.Հարությունյան) կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ վերջին տարիներին հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը գրեթե չի փոխվել (2017թ-ին կազմել է 21.1 տոկոս, 2018թ-ին՝ 21.6 տոկոս, 2019թ-ին կանխատեսվում է 20.7 տոկոս), որը վկայում է, որ ստվերային տնտեսության ծավալների զգալի նվազում կամ հարկային վարչարարության բարելավում տեղի չի ունեցել և չի ակնկալվում, հետևաբար ստվերի կրճատման միջոցառումների վերլուծությունը իրականացվել է պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, օրենսդրական նորմերի պատշաճ կիրառման ուղղություններով: Խնդրի ուսումնասիրության շրջանակներում ստվերայինության առաջացման դրոպապատճառները ներկայացվել են ըստ տարբեր գործոնների՝ ըստ տնտեսության ճյուղերի, ըստ կազմակերպության չափերի, ըստ առկա ռիսկերի, ըստ օրենսդրական և վարչարարության համակարգում առկա խնդիրների և այլն: Առաջադրված հարցադրումների շուրջ տրվել են կիրառական առաջարկություններ: Ներկայացվել են ՀՀ-ի ստվերային տնտեսությունը կարգավորող մեխանիզմներ՝ ազգային-

պետական շահերի, տնտեսական անվտանգության ապահովման նպատակներին համապատասխան, օրինապահ հարկ վճարողների գործունեությանը չխոչընդոտելու, ինչպես նաև ստվերում գտնվողների բացահայտման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

«Միջուկային էներգետիկայի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Հ.Ա.Մարկոսյան) կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ միջուկային էներգետիկայի ոլորտում նպատակահարմար չէ ձեռնարկել ԱԷԿ նոր էներգաբլոկի շինարարությունը, քանի որ ամբողջ աշխարհում միջուկային էլեկտրակայանների շինարարության ընթացքը բնութագրվում է ինչպես նախահաշվի անընդհատ աճով, այնպես էլ ժամկետների չպահպանմամբ: Նոր միջուկային էներգաբլոկների շինարարությունն ամբողջ աշխարհում կրճատվում է, ինչը հստակ ցույց է տալիս դրանց նկատմամբ տնտեսական հետաքրքրվածության անկումը: 2016թ. ամբողջ աշխարհում մեկնարկել են 3 նոր միջուկային ռեակտորի շինարարության աշխատանքներ (Չինաստան՝ 2, Պակիստան՝ 1), 2017թ.–ին՝ ընդամենը 1 (Հնդկաստան):

«Արտահանման խթանման և ներմուծման փոխարինման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Լ.Ն.Մարգարյան) կատարված հետազոտությունները վկայում են մրցունակ արտադրանք թողարկելուն զուգահեռ դրա արտահանմանն օժանդակող մեխանիզմներ մշակելու անհրաժեշտության մասին: Այդ նպատակով հիմնավորվել է արտերկրում հայկական ներկայացուցչությունների ցանցի ընդլայնման, որակի երաշխիք հանդիսացող ապրանքային նշանի ձեռքբերման և արտասահմանյան շուկաներում հնարավոր բոլոր մարկետինգային միջոցներով դրա հետևողական տարածման, միջազգային տոնավաճառներին և ցուցահանդեսներին մասնակցության անհրաժեշտությունը: Առաջարկվել է ՀՀ արտահանող կազմակերպություններին աջակցելու նպատակով ստեղծել ՀՀ արտահանման հարթակ, որտեղ կազմակերպությունների գրանցումը կլինի կամավոր և մատչելի անդամավճարի պայմանով: Արտահանման հատվածում գրանցվող կազմակերպությունները այնտեղ կներկայացնեն իրենց արտադրատեսականին, իսկ հարթակի առաջնորդն գործառույթը կդրվի տարբեր երկրներում գործող ՀՀ առևտրային ներկայացուցչությունների վրա:

«Գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Գ.Մանուչարյան) կատարված հետազոտությունները վկայում են, որ ապահովագրական գործուն համակարգի ներդրման հիմնական նախապայմանը գյուղատնտեսության ապահովագրական ռիսկերի համապարփակ գնահատումն է, որին համահունչ առաջարկվել է պետական միջոցների հաշվին ապահովագրական ռիսկերի համատարած գնահատման ծրագրերի իրականացումը: Հաշվի առնելով գյուղատնտեսության ապահովագրության գործուն համակարգի ներդրման ծախսատարությունն ու գործընթացի խթանումը սահմանափակող գործոնները՝ այն պետք է իրականացվի փուլային եղանակով: Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար անհրաժեշտ և պարտադիր պայման է որոշակի տարածքներում, խոշոր տնտեսություններում, առանձին համայնքներում իրականացնել փորձնական (պիլոտային) ապահովագրական ծրագրեր, մասնավորապես կապված սահմանափակ ռիսկերի հետ:

«ՀՀ ռազմարդյունաբերության նորարարական զարգացման կլաստերային մեխանիզմները» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Գ.Է.Հարությունյան) առաջարկվել է պետության կողմից նախաձեռնել ռազմարդյունաբերական կլաստերների ձևավորման քայլեր միաժամանակ ՀՀ մի քանի տարածաշրջաններում, մասնավորապես

Գյումրիում՝ որպես կլաստերի միջուկ դիտարկելով Ավիավերանորոգման գործարանը (կամ Ավիավերանորոգման գործարանը), Հրազդանում՝ «Պատնեշ ՓԲԸ»-ն, Եղվարդում՝ «65-րդ ռազմական գործարանը», Գորիսում՝ «Գորիսի Գամմա» ԲԲԸ-ն): Կլաստերների նման առաջարկները հիմնավորված են արտադրական, գիտակրթական, տրանսպորտային ենթակառուցվածքների առկայությամբ, հարակից և սպասարկող ճյուղերի (թեև սակավաթիվ) առկայությամբ, տարածքային զարգացման անհամաչափությունների հարթեցման պահանջով:

5. 2018 թ. հրապարակումների ցանկը

Մենագրություններ

1. Հարությունյան Գ.Է., Ռեզիդենտությունաբերություն. գերակայություններ, հնարավորություններ, հեռանկարներ, Ե., «Լիմուշ» հրատ., 2018, 234 էջ:
2. Հարությունյան Վ.Լ., Հայաստանի Հանրապետությունում ստվերային տնտեսության պատճառների վերլուծություն, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 230 էջ:
3. Սարինյան Ռ.Ն., Հարությունյան Վ.Լ., Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը. գիտակենսագրական հանրագիտարան (2-Ֆ): Երկու գրքով, Գիրք II, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 424 էջ:
4. ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները (2007-2017թթ.): Կազմող՝ Վ.Լ.Հարությունյան, Ե., «Գիտություն» հրատ., 2018, 352 էջ:
5. «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտ. հոդվածների ժողովածու - 2018» մաս I, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 312 էջ:
6. «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտ. հոդվածների ժողովածու - 2018» մաս II, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 304 էջ:
7. «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտ. հոդվածների ժողովածու (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակին, 1943-2018), ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ: Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 280 էջ:
8. 2017թ. գիտահետազոտական աշխատանքների կիրառական արդյունքները, գիտ. խմբագիր՝ Վ.Հարությունյան, Ե., ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. ՏԻ, 2018, 104 էջ:
9. Հարությունյան Վ.Լ., Սարինյան Ռ.Ն., ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական ուղին, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 152 էջ:
10. Габриелян Б.В., Управление персоналом, Е., Авторское издание, 2018, 253 с.
11. Даллакян С.А., Трудовая миграция в Республике Армения (2006-2017гг.), Миграционные потоки и регулирования трудовой миграции, LAP LAMBERT Academic Publishing RU, 2018, Литва, 57с.

Հոդվածներ

1. Բեգլարյան Մ.Ա., Հարկային կառավարման հիմնախնդիրները փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում, Ե., «Լրաբեր» հասարակական գիտությունների 1(652) հունվար-ապրիլ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 215-224:
2. Բեգլարյան Մ.Ա., Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական կառավարման առաջնահերթությունները, Ե., «Հանրային կառավարում», № 1-2, 2018, էջ 139-148:
3. Դավլաթյան Ս.Ա., Սարգսյան Ս.Հ., ՀՀ-ից արտագնա միգրանտների մեկնման

գործընթացի կարգավորումը համապատասխան գործիքակազմի միջոցով, Ե., «Լրաբեր» գիտական հոդվածների ժողովածու, Մաս 1, ՀԱՊՀ «Ճարտարագետ» հրատ., էջ 340-352:

4. Դավլաթյան Ս.Ա., Փոքր և միջին ձեռներեցությունը, առկա խոչընդոտները և հեռանկարային զարգացումը ՀՀ-ում, Ե., «Գիտական տեղեկագիր» Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի, , №1(34,35), 2018, էջ 29-35:

5. Զախարյան Ա.Գ., Ֆինանսական հնարավորությունների ընդլայնման ուղիները ՀՀ բաժնետիրական ընկերություններում, Ե., ՀՊՏՀ «Բանբեր» №2, էջ 122-133:

6. Իսահակյան Ռ.Կ., Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունները և տեսակները, Ե., «Ֆինանսներ և էկոնոմիկա», № 7 (215), 2018, էջ 34-38:

7. Հարությունյան Վ.Լ., Հարությունյան Ս.Վ., Հարկերի տեսակները և դրանց դասակարգումը, Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ, ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր (2017 թ. 22-24 նոյեմբեր), ՀՊՏՀ, Ե., «Տնտեսագետ», 2018, էջ 247-259:

8. Հարությունյան Վ.Լ., Հարությունյան Ս.Վ., Հարկային օրենսդրության ձևավորման ու բարեփոխման ընդհանուր բնութագիրը և բնորոշ գծերը, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», #3-4 (654), սեպտեմբեր-դեկտեմբեր, 2018, էջ 115-132:

9. Հարությունյան Վ.Լ., Հարությունյան Ս.Վ., ՀՀ հարկային օրենսդրության ձևավորման ու բարեփոխման էվոլյուցիան հաստատագրված վճարների մասով, Ե., «Հանրային կառավարում», № 3-4, 2018, էջ 94-102:

10. Սարինյան Ռ.Ն., Հայ քննադատական մտքի պատմությունից. Միքայել Վարանդյան, Ե., «Հայագիտություն» № 4: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018 , էջ 17-42:

11. Азатян Л.С., Сельскохозяйственное страхование и управление аграрным риском в экономически развитых и развивающихся странах, European Research: сб. статей XIV Международной научно-практической конференции. В 2 ч., Ч. 2. Пенза: МЦНС “Наука и просвещение”, 2018, стр. 31-34.

12. Азатян Л.С., Роль и значение сельскохозяйственного страхования в современных условиях в Республике Армения, Наука, образование, общество: тенденции и перспективы развития, сб. материалов IX международной научно-практической конференции (Чебоксары, 12.02.2018г.), Чебоксары: ЦНС “Интерактив плюс”, 2018, стр. 225-227.

13. Азатян Л.С., Виды кредитных организаций и особенности их деятельности, European scientific conference: сб. статей XI международной научно-практической конференции. (Пенза, 07.09.2018), Пенза: МЦНС “Наука и просвещение”, 2018, стр.103-106.

14. Азатян Л.С., Международный опыт кредитования сельского хозяйства и возможности его применения в РА, Сб. статей XXIV международной научно-практической конференции “Word science: Problems and innovations” (Пенза, 30.09.2018), Пенза: МЦНС “Наука и просвещение”, 2018, стр.95-98.

15. Азатян Л.С., Риски лизинговых сделок в аграрном секторе РА, Экономика и современный менеджмент: теория, методология, практика: сб. статей IV международной научно-практической конференции (г. Пенза, 10.11.2018г.), Пенза: МЦНС “Наука и просвещение”, 2018, стр. 55-58.

16. Алоян Р.С., Анализ мер по внедрению сельскохозяйственного страхования, Научное и образовательное пространство: перспективы развития, сб. материалов VII международной научно-практической конференции (Чебоксары, 15.01.2018г.), Чебоксары: ЦНС “Интерактив плюс”, 2018, стр. 243-246.

17. Алоян Р.С., Страхования сельскохозяйственных культур и управление рисками,

Экономическая наука сегодня: теория и практика, сб. материалов IX международной научно-практической конференции (Чебоксары, 23.02.2018г.), Чебоксары: ЦНС “Интерактив плюс”, 2018, стр. 23-27.

18. Алоян Р.С., Современные проблемы развития аграрного сектора в РА, Современная наука: актуальные вопросы, достижения и инновации, сб. статей III международной научно-практической конференции (Пенза, 05.09.2018г.), Пенза: МЦНС “Наука и просвещение”, 2018, стр. 68-72.

19. Алоян Р.С., Суть кредитных организаций и их отличие от коммерческих банков, Современная наука: актуальные вопросы, достижения и инновации, сб. статей XX Международной научно-практической конференции (Пенза, 25.09.2018г.), Пенза: МЦНС “Наука и просвещение”, 2018, стр. 41-44.

20. Алоян Р.С., Лизинг в РА как средство долгосрочного кредитования аграрного сектора, Экономика, управление и право: Инновационные решения проблем, сб. статей XV Международной научно-практической конференции (Пенза, 05.11.2018г.), Пенза: МЦНС “Наука и просвещение”, 2018, стр. 22-25.

21. Арутюнян В.Л., Арутюнян Т.В., Законодательные и методологические основы для исчисления налоговых обязательств в отношении фиксированных платежей, Гуманитарные науки: современный вклад на изучение актуальных проблем, сб. материалов научно-практической конференции (г. Севастополь, 25.05.2018г.). Иркутск, Научное партнерство “Апекс” 2018, стр. 54-62.

22. Арутюнян В.Л., Арутюнян Т.В., Подходы к реформированию налогового законодательства в отношении налога на имущество, “Наука сегодня: Факты, тенденции, прогнозы”. Материалы международной научно-практической конференции (Россия, г. Вологда, 27.06.2018г.), Вологда., ООО “Маркер”, 2018, стр. 58-60.

23. Арутюнян В.Л., Дохолян С.В., Роль сектора туризма в экономике Армении, Экономика и управление: проблемы, решения. Том 1, №12, М., Изд. дом “Научная библиотека”, 2018, стр. 26-44.

24. Бегларян М.А., Проблемы организационных структур малых и средних предприятий в Армении, Научный журнал “Интернаука”, изд. дом “Интернаука”, №4(44), 2018, 2 т., стр. 7-10.

25. Галстян А.М., Факторы возникновения теневого оборота, Актуальные вопросы экономики и управления: сб. мат. IV Международной научно-практической конференции, Под общ. ред. С.С. Чернова. Новосибирск: Изд. ЦРНС, 2018, стр. 154-159.

26. Геворкян А.А., Габриелян Б.В., Некоторые понятия о формировании корпоративной культуры, “Аллея Науки” научно-практический электронный журнал № 6(22), 2018, стр. 512-517.

27. Даллакян С.А., Саркисян С.А., Малое и среднее предпринимательство в Республике Армения: зарубежный опыт финансовой и кредитной поддержки, Международный научный журнал “Интернаука” № 3 (43), сб. научных трудов, 2 т., Киев: 2018, стр. 43-47.

28. Даллакян С.А., Саркисян С.А., Особенности демо-экономических процессов в РА, Сб. научных трудов, Международный научный журнал “Интернаука” № 4 (12), Киев, 2018, стр. 62-69.

29. Даллакян С.А., Саргсян С.А., Анализ и совершенствования направлений государственной поддержки малого и среднего предпринимательства в Республике Армения, “Лидерство и менеджмент” том 5, №2, 0.8 усл./печ.л., 2018.

30. Затикян А.Т., Вопросы налогового стимулирования и финансового обеспечения

малого бизнеса в Армении, Актуальные вопросы экономики и управления: сб. материалов IV Международной научно-практической конференции (г. Новосибирск, 2 марта, 04.04.2018г.), Новосибирск: Изд. ЦРНС, 2018, стр. 110-118.

31. Захарян А.Г., Проблемы совершенствования управления инновационной деятельностью высокотехнологичных компаний в Республике Армения, Научно-практический электронный журнал “Аллея Науки” № 8(23) (том 4) (сентябрь, 2018), 2018, стр. 523-529.

32. Кюрегян А.М., Петросян Л.М., Альтернативные налогообложения с распределением прибыли в контексте трансфертного ценообразования, Наука и инновации в современных условиях, часть 1, сб. статей по итогам меж. научно-практ. конф. (Оренбург, 8.03.2018г.), Стерлитамак, АМИ, 2018, стр. 167-171.

33. Парсаданян Т.С., Критерии и режимы стратегии таргетирования инфляции, XXXV Международные научные чтения (памяти Л.Д. Ландау), Сб. статей международной научно-практической конференции (2 октября 2018г.), М., ЕФИР, 2018, стр. 15-18.

34. Парсаданян Т.С., Методы трансфертного ценообразования и особенности их применения, Международный научный журнал “Синергия Наук”, №23 (май, 2018), 2018, стр. 51-54.

35. Парсаданян Т.С., Элементы, считающиеся и не считающиеся налогооблагаемым доходом нерезидентов в РА (на примере налога на прибыль), Сб. статей XXXVI международной научно-практической конференции посвященной памяти В.Л.Гинзбурга 16.10.2018г., М, ЕФИР, 2018, стр. 41-43.

36. Погосян Ш.П., Демографические проблемы Республики Армения, Современные социально-экономические процессы: проблемы, закономерности, перспективы, сб. статей IV международной научно-практической конференции. Пенза, МЦНС “Наука и Просвещение”. 2018, стр. 260-262.

37. Погосян Ш.П., Прямые маркетинговые мероприятия и оценка стоимости, Новое слово в науке: стратегии развития: материалы IV Всерос. науч.-практ. конф. с международным участием (Чебоксары, 12.03.2018г.), Чебоксары: ЦНС “Интерактив плюс”, 2018, стр. 282-285.

38. Погосян Ш.П., Миграция: Потоки и проблемы, Экономика, Бизнес, Инновации: сб. статей II Международной научно-практической конференции, Пенза., Изд.: МЦНС “Наука и Просвещение”, 2018, стр. 294-296.

39. Погосян Ш.П., Высшая технология в секторе экономики Республики Армении, Инновационное развитие современной науки: проблемы, закономерности, перспективы: сб. статей VIII Международной научно-практической конференции. Пенза., МЦНС “Наука и Просвещение”, 2018, стр. 38-42.

40. Погосян Ш.П., Особенности развития инновационной экономики, Инновационные научные исследования: Теория, методология, практика: сб. статей XV Международной научно-практической конференции, Пенза, МЦНС “Наука и Просвещение”. 2018, стр. 104-107.

41. Рафаелян Т.А., Исторические предпосылки внедрения ядерной энергетики в Армении, Международный научный журнал “Научные Горизонты” №3(7), 2018, стр. 58-66.

42. Саргсян А.Т., Анализ соотношения кредитных вложений к ВВП РА, XXXIV Международные научные чтения (памяти С.И. Вавилова): Сб. статей международной научно-практической конференции (16.09.2018г., г. Москва). М., ЕФИР, 2018, стр. 46-48.

43. Саргсян А.Т., Потребительское кредитование как важное направление в общих кредитных вложениях коммерческих банков РА, XXXIII Международные научные чтения

(памяти С.В. Ильюшина): Сборник статей международной научно-практической конференции (02.09.2018г., г. Москва). М., ЕФИР, 2018, стр. 8-11.

44. Саргсян А.Т., Пути увеличения экспорта сельскохозяйственной продукции РА, *Actual scientific research 2018: сб. материалов XXXVII Международной научно-практической конференции* (27.04.2018), М., изд. "Олимп", 2018, стр. 350-352.

45. Саргсян А.Т., Финансирование внешней торговли с помощью аккредитивов, *Наука на современном этапе: Вопросы, достижения, инновации. Сб. материалов II Международной научно-практической конференции* (17.04.2018, МК-16, Тюмень), Т., изд. центр "QUANTUM", 2018, стр. 229-232.

46. Саргсян А.Т., Изменения структуры импорта отдельных товарных групп РА, *International scientific review. Международный научный обзор проблем экономики, финансов и менеджмента* (October 24-25, 2018), Boston. USA, стр. 34-36.

47. Саргсян Л.Н., Сравнительный анализ влияния экспорта и импорта на экономический рост в мире и в Армении, *Международный научный журнал "Интернаука". Серия: «Экономические науки», № 2 (10), 2018, Киев, стр. 131-136.*

48. Саргсян Л.Н., Инвестиционная среда Армении и методы ее улучшения, *Актуальные вопросы экономических наук и современного менеджмента: сб. ст. по матер. IX-X междунар. науч.-практ. конф. № 4-5(7), Новосибирск, СибАК, 2018, стр. 35-38.*

49. Саргсян Л.Н., Экспорт Армении и возможности его расширения в рамках ЕАЭС, *"Internauka": Series: "Economic Sciences". №10 (18), 2018, стр. 78-82.*

50. Шагинян Т.В., Основные риски, возникающие в банковской системе», *"Научно-практический электронный журнал Аллея Науки" № 4 (20), 2018, стр. 223-227.*

51. Эркоян А.С., Особые индикаторы институциональной среды: этическое поведение организаций, инновационные возможности, бизнес активность, *Современные социально-экономические процессы: проблемы, закономерности, перспективы, Сб. статей V международной научно-практической конференции* (Пенза 05.10.2018), Пенза, МЦНС "Наука и просвещение" 2018, стр. 77-81.

52. Эркоян А.С., Риски и проблемы кредитного финансирования сельского хозяйства, *"Бенефициар" №29, Кемерово, изд. дом "Плутон", 2018, стр. 6-8.*

53. Harutyunyan V.L., Ways of radical change of the image of tax and customs officers, *"Наука в цифрах" международный научный журнал: выпуск 1(6), 2018, стр. 4-9.*

54. Harutyunyan V.L., Interrelation of the activities of the Tax and Customs Authorities and Macroeconomic Activity, *Международный научный журнал "Научные Горизонты" №1(5), 2018, стр.12-29.*

55. Harutyunyan V.L., Harutyunyan T.V., Tax Administration and business Environment in the Republic of Armenia, *Economics: Economic Theory and business Process Scientific publishing "Problems of science" №1(33), 2018, pp.52-56.*

56. Harutyunyan V.L., Harutyunyan T.V., Perspectives of development of Tax System in the context of business Environment, *International Scientific Journal "Internauka" Series: "Economic sciences", 2(10), Kiev, 2018, pp.18-26.*

57. Harutyunyan V.L., Harutyunyan T.V., Assessment of Tax Potential and ways to Increase Efficiency of Tax Administration in the Republic of Armenia, *Sciences and World: International scientific journal, № 3(55), Volgograd, 2018, pp. 16-21.*

58. Harutyunyan V.L., Harutyunyan T.V., Necessity and essence of taxes, *Social Science and Humanity: The collection includes 8-th International Conference "Social Science and Humanity" by SCIEURO in London, 27-29 September 2018, pp. 44-64.*

59. Harutyunyan V.L., Practice of changing the image of tax and customs officers of developed and developing countries, Приоритеты мировой науки: эксперимент и научная дискуссия: сборник материалов Международной научно-практической конференции (22 октября 2018 г.), 2 том, Кемерово: ЗапСибНЦ, 2018, стр.184-192
60. Harutyunyan V.L., Dokholyan, S.V., “Medical tourism growth perspectives in Armenia”, РНЖ “Экономика и управление”, № 12(158), Санкт-Петербург.: Изд. Санкт-Петербургский университет технологий управления и экономики, 0.75 pp.
61. Grigoryan D.H., Practices of Export Promotion and Import substitution, Международный научный журнал “Научные Горизонты” №2(6), 2018, стр. 56-66.
62. Grigoryan D.H., Foreign direct investment inflow in Armenia by countries, научно-практический электронный журнал “Аллея Науки” том 3, №10(26), 2018, стр. 476-479.
63. Makaryan A.R., Armenia’s comparative advantage in producing and exporting the harmonized system standard product groups, Региональные проблемы преобразования экономики», № 2 (88), pp. 93-102.
64. Makaryan A.R., Generics’ Exports To Russia As one of the Drivers of Output Growth of the Manufacture of Pharmaceuticals, Medicinal Chemical and Botanical Products Industry in Armenia, Региональные проблемы преобразования экономики №7(93), 2018, pp.135-144.
65. Makaryan A.R., Dokholyan S.V., The export-led growth path of the Armenian pharmaceutical product industry from 2018 to 2020, “Экономика и управление”, № 10 (156), Санкт-Петербург, изд. Санкт-Петербургский университет технологий управления и экономики, 2018, pp. 62-71.
66. Manucharyan M.G., The insurance in the formation of an investment environment, International Journal of Innovative Technologies in Economy, 1(13) February 2018, Poland, Warsaw, pp. 4-9.
67. Manucharyan M.G., Methodology for the establishment of the agricultural insurance market in Armenia, Znanstvena misel journal, №15, 2018, Vol.1, Slovenia 2018, pp. 32-35.
68. Manucharyan M.G., Manifestation types of risks of agrarian system and their essence in the Republic of Armenia, World Science № 3(31), Vol. 4, March 2018, Poland, Warsaw, pp. 4-8.
69. Manucharyan M.G., The insertion ways of traditional and innovative products of agricultural insurance in the Republic of Armenia, Молодежь и научно-технический прогресс: Сборник докладов XI международной научно-практической конференции студентов, аспирантов и молодых ученых. Белгородский государственный технологический университет им. В.Г.Щухова, Губкинский филиал, 19.04.2018г., т. 2, стр. 494-498.
70. Manucharyan M.G., The role and characteristics of crediting in the agrarian sector of the Republic of Armenia, Научно-информационный центр “Знание” XXXIX международная конференция “Развитие науки в XXI веке”, Украина, г.Харьков, 2018, стр. 44-49.
71. Markosyan H.A., The role of renewable energy in ensuring energy security of the Republic of Armenia, “Региональные проблемы преобразования экономики” № 10 (96), 2018, pp. 222-229.
72. Voskanyan G.V., Financing agriculture and ways to invest loan insurance in RA, “Znanstvena misel” № 24, Slovenia, 2018, pp. 3-5.
73. Voskanyan G.V., Analysis of the current situation of insurance market and credit insurance in RA, World Science № 11(39), November 2018, Poland, Warsaw, pp. 46-50.

74. Բեգլարյան Մ.Ա., Փոքր և միջին ձեռնարկատիրության տեղը շուկայական տնտեսության համակարգում, էջ 107-111:

75. Հարությունյան Վ.Լ., Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների գործունեությունը կատարելագործելու հիմնախնդիրները, էջ 122-125:

76. Պետրոսյան Լ.Մ., Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատման մոտեցումները ՀՀ տնտեսության իրական հատվածում, էջ 104-107:

77. Ջավադյան Մ.Ս., Ֆինանսական ռեսուրսների գծով կառավարչական որոշումների ուղղությունները ՀՀ առևտրային բանկերում, էջ 7-13:

Հոդվածները հրատարակվել են «Ֆինանսներ և էկոնոմիկա» #3-4 (211-212), Ե., 2018 ամսագրում

78. Հարությունյան Վ.Լ., Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների գործունեությունը կատարելագործելու հիմնախնդիրները, էջ 62-67:

79. Շահինյան Տ.Վ., Առևտրային բանկերի ակտիվային և պասիվային գործառնությունների վերլուծություններն ու դրանց կատարելագործման ուղիները, էջ 18-21:

80. Ջավադյան Մ.Ս., Առևտրային բանկերի ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետության բնութագրիչները, էջ 37-41:

Հոդվածները հրատարակվել են «Ֆինանսներ և էկոնոմիկա» #5-6 (213-214), Ե., 2018 ամսագրում

81. Դոխոյան Ա.Ս., Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման և արդյունավետության գնահատման բարելավման ուղիները, էջ 95-100

82. Հարությունյան Վ.Լ., Հարությունյան Տ.Վ., Հարկային օրենսդրության ձևավորման ու բարեփոխման էվոլյուցիան պարզեցված հարկի մասով ՀՀ-ում, էջ 103-106:

